Հավելված 7
«ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-2»

ք. Արթիկ «22» փետրվարի 2018թ.

<<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Յու. Ղազոյանի, որը գործում է <<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը չկատարելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վճարված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 707765 /յոթ հարյուր յոթ հազար յոթ հարյուր վաթսունհինգ/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք մանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ	<<Արֆարմացիա>> ՓԲԸ
ՀՀ, ք. Արթիկ, Բաղրամյան 2	Ք.Երևան,Ռաֆֆու 111
ՀՎՀՀ 06107489	Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Արդշինբանկ ՓԲԸ Արթիկ մ/ճ	հ/հ 16[illegible]0220
հ/հ 2470400339430010	ՀՎՀՀ 02505735
Տնօրեն	Տնօրեն
Յու. Նազոյան	Ա.Գրիգորյան

Հավելված N
« 22 »փետրվարի 20 18 թ. կնքված
«ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-2» ծածկագրով
պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
7	33621160	Ամինոկապրոնաթթու 50մգ/մլ 250մլ պլաստիկե փաթեթ	<<Ֆարմատեք>> Հայաստան	Ամինոկապրոնաթթու Aminocaproic acid լուծույթ ներարկման 50մգ/մլ, 250մլ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)	հատ	360	7200	20	ՇՄ թ.Արթիկ Բաղրամյան 2	20	2018թ. ընթացքում
21	33600000	Դեքստրոզ (դեքստրոի մոնոհիդրատ) 50մգ/մլ, 500 մլ պլաստիկե փաթեթ	<<Ֆարմատեք>> Հայաստան	Դեքստրոզ (դեքստրոի մոնոհիդրատ) 50մգ/մլ, 500 մլ պլաստիկե փաթեթ լուծույթ կաթիլաներարկման Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)	հատ	162	162000	1000	ՇՄ թ.Արթիկ Բաղրամյան 2	1000	2018թ. ընթացքում
27	33621440	Բենդազոլ (բենդազոլի հիդրոքլորիդ)10մգ/մլ, 1մլ	<<Երևանի քիմ. դեղ. ֆիրմա>> Հայաստան	Բենդազոլ bendazol լուծույթ մ/մ ներարկման 10մգ/մլ, 1մլ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)	սրվակ	24,8	49600	2000	ՇՄ թ.Արթիկ Բաղրամյան 2	2000	2018թ. ընթացքում
56	33671135	Կալցիումի քլորիդ,լուծույթ 100մգ/մլ, 5մլ	<<Երևանի քիմ. դեղ. ֆիրմա>> Հայաստան	Կալցիումի քլորիդ calcium chloride լուծույթ ներարկման 100մգ/մլ, 5մլ ամպուլ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)	սրվակ	37,5	1875	50	ՇՄ թ.Արթիկ Բաղրամյան 2	50	2018թ. ընթացքում
60	33691134	Կալիումի քլորիդ 40գ/լ, 100մլ , պլաստիկե փաթեթ	<<Ֆարմատեք>> Հայաստան	Կալիումի քլորիդ potassium chloride լուծույթ և/ե կաթիլաներարկման 40մգ/մլ, 100մլ	հատ	340	3400	10	ՇՄ թ.Արթիկ Բաղրամյան 2	10	2018թ. ընթացքում

				Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)							
67	33691227	Պոլիվինիլպիրոլիդոն, նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ, մագնեզիումի քլորիդ, նատրիումի հիդրոկարբոնատ 60մգ/մլ+5,5մգ/մլ+ 0,42մգ/մլ+0,38մգ/մլ+ 0,005մգ/մլ+0,23մգ/մլ, 500մլ, պլաստիկե փաթեթ	<<Ֆարմատեք>> Հայաստան	Պոլիվինիլպիրոլիդոն, նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ, մագնեզիումի քլորիդ, նատրիումի հիդրոկարբոնատ 60մգ/մլ+5,5մգ/մլ+ 0,42մգ/մլ+0,38մգ/մլ+ 0,005մգ/մլ+0,23մգ/մլ, 500մլ, պլաստիկե փաթեթ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)	հատ	980	98000	100	ՇՄ ք.Արթիկ Բաղրամյան 2	100	2018թ. ընթացքում
69	33611150	Պանկրեատին (3500ԱՄ լիպազ+ 4200ԱՄ ամիլազ+ 250ԱՄ պրոտեազ)	<<Բեռլինխեմի>> Գերմանիա	Պանկրեատին (3500ԱՄ լիպազ+ 4200ԱՄ ամիլազ+ 250ԱՄ պրոտեազ) դեղապատիճ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)	դեղահատ	33,9	3390	100	ՇՄ ք.Արթիկ Բաղրամյան 2	100	2018թ. ընթացքում
72	33661120	Մորֆինի հիդրոքլորիդ,10մգ/մլ, 1մլ	<<Զդարովյե նարոդու>> Ուկրաինա	Մորֆինի morphine, լուծույթ և/ե, մ/մ և ե/մ ներարկման, 10մգ/մլ 1մլ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)	սրվակ	420	63000	150	ՇՄ ք.Արթիկ Բաղրամյան 2	150	2018թ. ընթացքում
73	33691112	Մետրոնիդազոլ 500մգ/100մլ 100մլ պլաստիկե փաթեթ	<<Ֆարմատեք>> Հայաստան	Մետրոնիդազոլ metronidazole, 500մգ/100մլ 100մլ պլաստիկե փաթեթ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)	հատ	149	44700	300	ՇՄ ք.Արթիկ Բաղրամյան 2	300	2018թ. ընթացքում
75	33661170	Պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ) 5մգ/մլ, 250մլ , պլաստիկե փաթեթ	<<Ֆարմատեք>> Հայաստան	Պրոկային procaine լուծույթ ներարկման 5մգ/մլ, 250մ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)լ	հատ	504	12600	25	ՇՄ ք.Արթիկ Բաղրամյան 2	25	2018թ. ընթացքում
76	33691136	Նատրիումի քլորիդ 9մգ/մլ 500մլ, պլաստիկե փաթեթ	<<Ֆարմատեք>> Հայաստան	Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլներարկման 9մգ/մլ, 500մլ Հանձման պահին պիտանելիության ժամկետի	հատ	153	229500	1500	ՇՄ ք.Արթիկ Բաղրամյան 2	1500	2018թ. ընթացքում

				առկայություն (տես ծանոթությունը)							
79	33611170	Դրոտավերինը դեղահատերում, 40մգ	<<Արփիմեդ>> Հայաստան	Դրոտավերին drotaverine դեղահատ 40մգ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)	դեղահատ	6.5	32500	5000	ՇՄ ք.Արթիկ Բաղրամյան 2	5000	2018թ. ընթացքում

Ծանոթություն

ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:
դ.Գնման առարկայի պահպանումը և տեղափոխումն իրականացվում է համաձայն վերջիններիս արտաքին փաթեթի կամ ներդիր-թերթիկի ցուցումների:
Այն չափաբաժիններում, որոնց անվանումներում և տեխնիկական բնութագրերում առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը, համապատասխան ՀՀ գնումների մասին օրենքի սահմանված պահանջների համապատասխան:

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ

«Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ

ՀՀ, ք. Արթիկ, Բաղրամյան 2
ՀՎՀՀ 06107489
Արդշինբանկ ՓԲԸ Արթիկ մ/ճ
հ/հ 2470400339430010
Տնօրեն՝

_____Յու. Ղազոյան
(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

<<Արֆարմացիա>> ՓԲԸ

Ք.Երևան,Ռաֆֆու 111
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
հ/հ163008100220
ՀՎՀՀ 02505735

Տնօրեն՝

Գ.Գրիգոսիանիսյան
_____
(ստորագրություն)

Դ.Տ.

Հավելված N 2
« 22 »փետրվարի 20 18 թ. կնքված
«ԱՐԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-2» *ծածկագրով*
պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
7	33621160	Ամինոկապրոնաթթու 50մգ/մլ 250մլ պլաստիկե փաթեթ	-												100 %
21	33600000	Դեքստրոզ (դեքստրոի մոնոհիդրատ) 50մգ/մլ, 500 մլ պլաստիկե փաթեթ	-												100 %
27	33621440	Բենդազոլ (բենդազոլի հիդրոքլորիդ)10մգ/մլ, 1մլ	-												100 %
56	33600000	դինատրիումական ադենոզին տրիֆոսֆատի տրիհիդրատ, կոկարբոքսիլազ, ցիանոկոբալամին,	-												100 %
60	33621330	Նիկեթամիդ,լուծույթ ներարկման 250մգ/մլ(2մլ),2մլ	-												100 %
67	33691227	Պոլիվինիլպիրոլիդոն, նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ, մագնեզիումի քլորիդ,	-												100 %
69	33611150	Պանկրեատին (3500ԱՄ լիպազ+ 4200ԱՄ ամիլազ+ 250ԱՄ պրոտեազ)	-												100 %
72	33661120	Մորֆինի հիդրոքլորիդ,10մգ/մլ, 1մլ	-												100 %
73	33691112	Մետրոնիդազոլ 500մգ/100մլ 100մլ պլաստիկե փաթեթ	-												100 %
75	33661170	Պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ) 5մգ/մլ, 250մլ , պլաստիկե փաթեթ	-												100 %
76	33691136	Նատրիումի քլորիդ 9մգ/մլ 500մլ, պլաստիկե փաթեթ	-												100 %

79	33611170	Դրոտավերինի հիդրոքլորիդ, 40մգ	-												100 %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

«Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ

ՀՀ, ք. Արթիկ, Բաղրամյան 2
ՀՎՀՀ 06107489
Արդշինբանկ ՓԲԸ Արթիկ մ/ճ
h/h 2470400339430010
Տնօրեն՝

_____Յու. Ղազոյան
(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

<<Արֆարմացիա>> ՓԲԸ

Ք.Երևան,Ռաֆֆու 111
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
h/h163008100220
ՀՎՀՀ 02505735

Տնօրեն՝

_____Ա.Հովհաննիսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
« 22 »փետրվարի 20 18 թ. կնքված
«ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-2» *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 22 »փետրվարի 20 18 թ. կնքված
«ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-2» *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 11
<<ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3>> *ծածկագրով*
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան <<21>> <<02>> 2018թ.

<<Արֆարմացիա>> ՓԲԸ- ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հովհաննիսյան <<ID CARD 000976811, 004, 05.02.2013թ.>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ***<<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ -ի*** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ***<<ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3>>*** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<Արֆարմացիա>> ՓԲԸ

ք. Երևան,Ռաֆֆու 111

<<ՀայէկոնոմԲանկ>> ԲԲԸ

h/h 163008100220

ՀՎՀՀ 02505735

<<Արֆարմացիա>> ՓԲԸ

Գլխավոր տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան

Արֆարմացիա ՓԲԸ
Arpharmacia CJSC
02505735

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում տրապարակելը:*
*** լրացվում է մասնակցի կողմից*

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N** *(պայմանագրի կատարման ապահովում)*
2.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ <<Արֆարմացիա>> ՓԲԸ	
4. Վճարողի բանկը՝ <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ	
5. Վճարողի հաշվի համարը՝ 163008100220	
6. Վճարողի ՀՎՀՀ՝ 02505735	
7. Վճարողի ՀԾՀ՝	
8. Շահառու՝ <<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ	
9. Շահառուի ՀՎՀՀ՝ 06107489	
10. Շահառուի բանկը՝ Արդշինբանկ ՓԲԸ Արթիկ մ/ճ	
11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 2470400339430010	
12. Գումարը թվերով և բառերով՝ 70776.50(յոթանասուն հազար յոթ հարյուր յոթանասունվեց դրամ և հիսուն լումա)	
13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ /AMD/	
14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ *պայմանագրի կատարման ապահովում*	
15.Պայմանագրի ծածկագիրը՝ **<<ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-2>>**	
16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը	17. կից՝--- էջ
19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ 18.բ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐՈ1

22.02.2018ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-2 ծածկագրովկնքված պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու մասին

ք. Արթիկ <<23>>փետրվարի 2018թ.

<<Արթիկի բժշկականկենտրոն>>ՓԲԸ-ն, իդեմստնօրեն՝ Յու. Ղազոյանի, որըգործումէ<<Արթիկիբժշկականկենտրոն>>ՓԲԸ կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և<<Արֆարմացիա>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի,որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող»,մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր,ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով N ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-2 գնման պայմանագրի 1.1և և8.13 կետերը,կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Սույն համաձայնագրով Կողմերը որոշեցին հաստատել ՆԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-2 գնման պայմանագրով նախատեսված ապրանքներիմատակարարման և դրանց դիմաց ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը /վճարման ժամանակացույց/գնման ժամանակացույց/ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.2 Սույն համաձայնագրում չնշված ՆԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-2 ծածկագրովգնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

1.3 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Կողմերի միջև կնքված ՆԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-2 ծածկագրովգնման պայմանագրի անբաժանելի մասը:

1.4 Սույն համաձայնագիրը կազմված էհայերեն, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

2.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Արթիկիբժշկականկենտրոն» ՓԲԸ	<<Արֆարմացիա>> ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Արթիկ, Բաղրամյան 2	Հասցե՝ Ք. Երևան, Ռաֆֆու 111
ՀՎՀՀ06107489	ՀՎՀՀ 02505735
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸԱրթիկ մ/ճ	Բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
հ/հ2470400339430010	Հ/Հ 163008100220
Տնօրեն՝	Տնօրեն՝
_____Յու. Ղազոյան	_____Ա. Հովհաննիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.S.	Կ.S.

Հավելված 1
Հաստատված է
«22» փետրվարի2018թ. կնքված
N ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-2
գնմանպայմանագրիփոփոխությամբ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Գնման ժամանակացույց	ՍույնպայմանագիրնուժիմեջմտնելուօրվանիցհետոՊատվիրատուիցպատվերըստանալուցհետո 5 աշխատանքայինօրվաընթացում:

ԳՆՈՐԴ

«Արթիկիբժշկականկենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Արթիկ, Բաղրամյան 2
ՀՎՀՀ06107489
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸԱրթիկ մ/ճ
հ/հ2470400339430010
Տնօրեն՝

_____Յու. Ղազոյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<Արֆարմացիա>> ՓԲԸ
Հասցե՝ Ք. Երևան, Ռաֆֆու 111
ՀՎՀՀ 02505735
Բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163008100220
Տնօրեն՝

_____Ա. Հովհաննիսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
Հաստատվածէ
«22» փետրվարի2018թ. կնքված
N ԱրԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-2
գնմանպայմանագրիփոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Վճարմանժամկետը/վճարմանժամանակացույց	ՎճարումներնիրականացվելուենՊայմանագրիգործողությանշրջանակներում, յուրաքանչյուրամսվամինչև 15-րդբանկայինօրը,նախորդամսվաընթացքումփաստացիմատակարարվածապրանքների 100%-իչափով՝ Վաճառողիկողմիցհաստատվածներկայացվածհաշիվ-ապրանքագրերիևհաստատվածընդունման-հանձնմանարձանագրություններիհիմանվրա:

ԳՆՈՐԴ

«Արթիկիբժշկականկենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Արթիկ, Բաղրամյան 2
ՀՎՀՀ06107489
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸԱրթիկ մ/ճ
հ/հ2470400339430010
Տնօրեն՝

_____Յու. Ղազոյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<Արֆարմացիա>> ՓԲԸ
Հասցե՝ Ք. Երևան, Բաֆֆու 111
ՀՎՀՀ 02505735
Բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163008100220
Տնօրեն՝

_____Հ. Հովհաննիսյան
(ստորագրություն)

Կ.Տ.